Հավելված
ՀՀ կառավարության 2018թ.
մարտի 29-ի նիստի N 12
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Վերջնաժամկետը	Պատասխանատու կատարողը	Համակատարողը	Ֆինանսավորումը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
	1. Իրական սեփականատերերի թափանցիկությունն ապահովող իրավական և ինստիտուցիոնալ դաշտ				
1.1	ՀՀ վարչապետի որոշմամբ ՀՀ մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման նպատակով միջգերատեսչական աշխատանքային խմբի (այսուհետ՝ աշխատանքային խումբ) ստեղծում՝ ներգրավելով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը (այդ թվում, ընդերքի գործակալությունը), ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը (համաձայնությամբ), ՀՀ կենտրոնական բանկը (համաձայնությամբ):	2018թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ կառավարության աշխատակազմի ներքո գործող արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարություն (այսուհետ՝ քարտուղարություն)	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջում
1.2	Իրական սեփականատերերի և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց սահմանումների, բացահայտման հայտարարագրերն ընդունող պետական մարմնի լիազորությունների, մյուս մարմինների հետ համագործակցության պարտականությունների, բացահայտման պահանջի խախտման դեպքում սանկցիաների և այլ հարցերի վերաբերյալ քննարկումների անցկացում համապատասխան պետական մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ, մասնավորապես՝ ՀՀ ազգային ժողով, ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն (այդ թվում, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն), հանքարդյունահանող ընկերություններ	2018թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	քարտուղարություն, աշխատանքային խումբ	«Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը ՀՀ միանալու նպատակով բազմաշահառու խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2016	Ֆինանսավորում չի պահանջում

	(Հայաստանի հանքարդյունաբերողների և մետալուրգների միության միջոցով), քաղաքացիական հասարակության կազմակերպություններ:			թվականի նոյեմբերի 24-ի N 1104-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության բազմաշահառու խումբ (այսուհետ՝ բազմաշահառու խումբ)	
1.3	ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի, ինչպես նաև այլ օրենքներում (մասնավորապես՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք և այլն) փոփոխությունների նախագծերի փաթեթի կազմում և ներկայացում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն՝ սահմանելով մետաղական հանքարդյունահանող ընկերությունների կողմից իրական սեփականատերերի բացահայտումը և փոփոխության դեպքում այդ տվյալների թարմացումը որպես պարտադիր պահանջ, ամրագրելով չբացահայտման դեպքում սանկցիաները, պետական մարմինների միջև պատասխանատվության բաշխումը, տեղեկությունների ներկայացման, մշակման, փոխանցման և հրապարակման բիզնես գործընթացը, ինչպես նաև ապահովելով, որ անկախ կազմակերպաիրավական ձևից, բոլոր մետաղական հանքարդյունահանող ընկերություններից իրականացվի իրական սեփականատերերի մասին միևնույն տվյալների հավաքագրում, որը կբխի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության ստանդարտի պահանջներից և միջազգային ստանդարտներին համապատասխան իրական սեփականատիրոջ սահմանումից:	2018թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	աշխատանքային խումբ	բազմաշահառու խումբ, քարտուղարություն	Ֆինանսավորում չի պահանջում
1.4	ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի, ինչպես նաև այլ օրենքներում (մասնավորապես՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք և այլն) փոփոխությունների նախագծերի փաթեթի սահմանված կարգով ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	2018թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն		Ֆինանսավորում չի պահանջում
1.5	ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում և այլ	2018թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,	բազմաշահառու խումբ, քարտուղարություն	Ֆինանսավորում չի պահանջում

	օրենքներում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում ՀՀ կառավարության հավանությանը, որից հետո՝ սահմանված կարգով ներկայացում ՀՀ Ազգային ժողով		ՀՀ արդարադատության նախարարություն		
1.6	Հետագա տարիներին իրական սեփականատերերի բացահայտման շրջանակի ընդլայնման նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություն և դրա հետ կապված միջոցառումների ժամանակացույցի կազմում:	2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	քարտուղարություն	բազմաշահառու խումբ	Ֆինանսավորում չի պահանջում
2. Տվյալների հավաքագրում և հավաստիության ստուգում					
2.1	Իրական սեփականատերերի բացահայտման և հավաստիության ստուգման շրջանակներում պարտադիր տվյալների հավաքման ու մշակման տարբերակների քննարկում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընդերքի գործակալության, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի, և ՀՀ կենտրոնական բանկի (ֆինանսական դիտարկումների կենտրոնի) հետ՝ հետագայում դրանք իրավական ակտերում ամրագրելու նպատակով:	2018թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	քարտուղարություն, աշխատանքային խումբ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, բազմաշահառու խումբ, ՀՀ արդարադատության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջում
2.2	Իրական սեփականատերերի բացահայտման և ներկայացված տվյալների հավաստիության ստուգման ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերի մշակում, որոնցում պետք է սահմանվեն իրական սեփականատերերի և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասին տվյալների բացահայտման հայտարարագրի ձևը, տվյալների ներկայացման կարգը, ժամկետները, հավաստիության ապահովման մեխանիզմը, ինչպես նաև ներկայացված տվյալներից հրապարակման ենթակա տվյալների ցանկը և հայտարարագրում ներկայացված տվյալները հիմնավորող փաստաթղթերի ցանկը:	2019թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ	քարտուղարություն, աշխատանքային խումբ	բազմաշահառու խումբ, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջում
2.3	2.2 կետում թվարկված հարցերը կարգավորող, ինչպես նաև իրական սեփականատերերի բացահայտման և ներկայացված տվյալների ստուգմանը վերաբերող այլ հարցերի առնչությամբ ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերի սահմանված կարգով ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ:	2019թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	բազմաշահառու խումբ, քարտուղարություն, ՀՀ արդարադատության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջում
3. Իրական սեփականատերերի հանրային ռեգիստր					
3.1	Խորհրդակցություններ տարբեր պետական մարմինների հետ (ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ)՝ իրական սեփականատերերի ռեգիստրի տեղեկատվական տեխնոլոգիաների պլատֆորմի	2019թ. հունիսի 2-րդ տասնօրյակ	քարտուղարություն, բազմաշահառու խումբ		Ֆինանսավորում չի պահանջում

	(տվյալների բազայի) տեխնիկական առաջադրանքի մշակման շրջանակներում:				
3.2	Իրական սեփականատերերի ռեգիստրի տեղեկատվական տեխնոլոգիաների պլատֆորմի (տվյալների բազայի) տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում՝ հաշվի առնելով տարբեր պետական մարմինների տեղեկատվական համակարգերի փոխգործելիության և ռեգիստրում բաց տվյալների ձևաչափով տեղեկատվությունը տեղակայելու և տեղեկության որոնման հնարավորության (առնվազն երկլեզու՝ հայատառ և լատինատառ) անհրաժեշտությունը:	2019թ. հուլիսի 1-ին տասնօրյակ	քարտուղարություն, բազմաշահառու խումբ		Ֆինանսավորում չի պահանջում
3.3	Իրական սեփականատերերի ռեգիստրի տեղեկատվական տեխնոլոգիաների պլատֆորմի (տվյալների բազայի) ծրագրային ապահովման նպատակով մրցույթի անցկացում՝ համապատասխան ընկերություն ընտրելու նպատակով և ընկերության հետ պայմանագրի կնքում:	2019թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ կառավարության աշխատակազմ		Օրենքով չարգելված աղբյուրներ
3.4	Իրական սեփականատերերի ռեգիստրի ծրագրի փորձարկում և համակարգում, հաշվետու ընկերությունների գրանցման անհրաժեշտության դեպքում գրանցման իրականացում:	2019թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, քարտուղարություն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստր, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով հանքարդյունաբերող ընկերություններ (համաձայնությամբ), ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Օրենքով չարգելված աղբյուրներ
3.5	Իրական սեփականատերերի առցանց ռեգիստրի հանրային գործարկում:	2019թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ արդարադատության նախարարաության իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստր	քարտուղարություն	Ֆինանսավորում չի պահանջում

4. Կարողությունների զարգացում և իրազեկվածության բարձրացում					
4.1	Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության պորտալում իրական սեփականատերերի բացահայտմանը նվիրված ենթաբաժնի մշակում:	2018թ. մարտի 3-րդ տասնօրյակ	քարտուղարություն		Ֆինանսավորում չի պահանջում
4.2	Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների անցկացում:	2018թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	քարտուղարություն	բազմաշահառու խումբ	Օրենքով չարգելված աղբյուրներ
4.3	Իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ շահառուների ներգրավմամբ իրազեկման միջոցառումների անցկացում:	2018թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	քարտուղարություն, բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության խմբակցություն		Օրենքով չարգելված աղբյուրներ
4.4	Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի իրագործման վերաբերյալ հաշվետվության կազմում:	2018թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	բազմաշահառու խումբ		Ֆինանսավորում չի պահանջում
4.5	Իրական սեփականատերերի բացահայտման թեմայով վերապատրաստումների անցկացում շահագրգիռ պետական մարմինների աշխատակիցների համար:	2019թ. մայիսի 2-րդ տասնօրյակ	քարտուղարություն		Օրենքով չարգելված աղբյուրներ
4.6	Ենթաօրենսդրական ակտերի կիրարկման վերաբերյալ վերապատրաստումների անցկացում բազմաշահառու խմբի և հանքարդյունահանող ընկերությունների համար:	2019թ. հունիսի 2-րդ տասնօրյակ	քարտուղարություն, բազմաշահառու խումբ		Օրենքով չարգելված աղբյուրներ
4.7	Զանգվածային լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների համար իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրազեկման միջոցառումների իրականացում:	2019թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	քարտուղարություն, բազմաշահառու խումբ		Օրենքով չարգելված աղբյուրներ
4.8	Իրական սեփականատերերի ռեգիստրի տեղեկատվական տեխնոլոգիաների պլատֆորմում (տվյալների բազայում) տվյալների վերբեռնման վերաբերյալ վերապատրաստումների անցկացում հանքարդյունահանող ընկերությունների համար:	2019թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	քարտուղարություն	Հայաստանի հանքարդյունաբերողների և մետալուրգների միություն (համաձայնությամբ)	Օրենքով չարգելված աղբյուրներ
4.9	Զանգվածային լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների համար իրական սեփականատերերի հանրային առցանց ռեգիստրից օգտվելու վերաբերյալ վերապատրաստումների իրականացում:	2019թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	քարտուղարություն, բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության խմբակցություն		Օրենքով չարգելված աղբյուրներ